ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 ապրիլի 2013թ. թիվ 48-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի 2013թ. հունվարի 25-ի թիվ 9-Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի», ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2013 թվականի մայիս ամսվա ընթացքում Լոռու մարզի Շահումյան, Ձորագյուղ, Վահագնի, Հալավար, Օձուն, Նեղոց, Աքորի, Կաճաճկուտ և Սարամեջ համայնքներում անցկացնել շտաբային ուսումնավարժություններ «Բնակչության պաշտպանության կազմակերպումը սողանքների և քարաթափումների ակտիվացման դեպքում» թեմայով:

2. Ուսումնավարժությունների կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով սահմանել ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:

3. Ուսումնավարժությունների ղեկավարներ նշանակել համապատասխան համայնքների ղեկավարներին:

4. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Սույն որոշումը տրամադրել վերը նշված համայնքների ղեկավարներին, նրանց ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. ապրիլի 4
ք.Վանաձոր